ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

27 հոկտեմբերի 2016 թվականի **թիվ 17** քաղ. Մինսկ

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդում Ղազախստանի Հանրապետության ներկայացուցչի մասին**

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հոդվածին, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 23-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի» 3-5-րդ կետերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդին ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդում Ղազախստանի Հանրապետության ներկայացուցչին՝ Ղազախստանի Հանրապետության վարչապետի առաջին տեղակալ Ասկար Ուզակպայի Մամինին, որին վերապահվել են անհրաժեշտ լիազորություններ՝ Ղազախստանի Հանրապետության նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 356 հրամանագրին համապատասխան:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

| Հայաստանի Հանրապետությունից՝ | Բելառուսի Հանրապետությունից՝ | Ղազախստանի Հանրապետությունից՝ | Ղրղզստանի Հանրապետությունից՝ | Ռուսաստանի Դաշնությունից՝ |
|---|---|---|---|---|